59. Մեծ գավթի ներսում, իր պատի աջ կողմում, բարձուս

(Լուս. № 49)

*Հ ՈՀ Մ 1221*

Հրատարակված է՝ Զալ 24—25, Դրիմ 54—55, Հար 279, Վիմ 52

1 *Ի ՈՀ Թու.*
2 *Ես Վաչէ, ծառա Զաքարիաի, որդի Սարգսի, շինեցի*
3 *զխորանս եւ եառւ զիմ ոսկետուփ զաւետարանս եւ*
4 *զսբ նշանս և զգործքս՝ մեծ ծախիւք ի սբ Ածածինս։*
5 *Առաջնորդք սբ ուխտիս հայր Վարդան եւ վարդապետս Գրի-*



*Նկ. 49. Արձ. №№ 59 և 60։*

6 *գոր, միաբանուքս հաստատեցաք ի տարոջն զսբ Գերգին*
7 *զշաբաթն եւ զկիրակէն զամէն եկեղեցիս պատար-*
8 *ագ. ի կենդանութե մեր ծնաւղացն եւ յետ մահուն մեր՝ մին*
9 *աւրն ինձ Վչ(Վաչէի) եւ մինն ամուսնոյ իմ՝ Մամախաթունին։*
10 *Ով խափանէ, մեր խղճիս տէր է առաջի Այ։*

Ծանոթություն.— *4-րդ տողում գործքը հավանաբար* գործք առաքելոց *գիրքն է, այլապես նշված կլիներ գործերի անունը։* Գործք *է կոչվել նաև շարականի հարցի վերջին մասը։*

Տարընթերցում.— *1. Զալ բաց է թողել թվականը և Զաքարեի հոր անունը (Սարգիս)։*

*2.* Դրիմ *սկզբում ավելացրել է* կամաւն Այ:

*3.* Դրիմ *4-րդ տողում* զԳործքս *կարդացել է* զգործին, *իսկ* Զալ զգործ:

*4.* Դրիմ *և* Զալ *6-րդ տողում* Գերգին *կարդացել են* Գրիգորի: